# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 5 | ԳՆՈՄՈՆ | ԳՆՈՄՈՆ | Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ | Մեդալը բաղկացած է չժանգոտվող ցինկապատ պողպատե կախիչից և դրան կապօղակով ամրացած հավասարակողմ բազմանկյուն, որի վերին մասը շրջանաձև է: Կախիչը ասեղային ամրակով. Արտադրվում է առնվազը 75% պղնձի պարունակությամբ համաձուլվածքից, փայլատ մակերես ստանալու տեխնոլոգիայով (էլեկտրոէռոզիոն մշակման մեթոդով ստացվող փայլուն մատային մակերես Ն2 սանդղակով), դրոշման եղանակով, անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում 900-ից բարձր հարգի ոսկով՝ նվազագույնը 0,5 մկմ հաստությամբ: Տրամագիծը 45 մմ, հաստությունը՝ 2մմ (շեղում՝ +/- 0.1մմ): Մեդալի ոսկեգույն հավասարակողմ բազմանկյան ֆոնի վրա Երկրի մայրցա¬մաքների թիվը խորհրդանշող մուգ կարմիր գույնի հնգաթև աստղ է, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | որին արտագծված շրջանագծի տրամագիծը 45 մմ է: Կողմերը ռոմբավորված են արևը խորհրդանշող 1 մմ լայնությամբ սրածև ճառագայթներից կազմված ռոմբիկներով, որոնք հատվում են կարմիր աստղի կենտրոնում գտնվող 25 մմ տրամագիծ ունեցող երկրագունդը խորհրդանշող կապույտ շրջանակում: Շրջանակի վերին մասում եզրագծով գրված են «ՀՀ ԱԻՆ ՎԵՏԵՐԱՆ» բառերը, որոնք աջ և ձախ կողմերից եզերված են դափնեպսակով: Շրջանակի վերին մասում Արարատ լեռն է, իսկ ներքևում` վեր պարզված ձեռքեր, որոնք վեր են պահում ջահը: Գնդի ներքևի մասում, առանցքի ուղղությամբ աղետներին դիմագրավող սև գույնի վահանն է, որի վրա պատկերված է աղետից փրկված Արարատի ոսկեգույն ուրվագիծը: Վահանից դուրս են գալիս աղետապաշտպան տեգերը (կացինները), շեղբով ձուլվում հնգաթև աստղի գագաթը հավասարաչափ երիզող ոսկեգույն բազմանկյան ֆոնին: Մեդալն ունի վեցանիստ սեղանաձև կախիչ` 30x45 չափսերով, վրայից ուղղանկյունաձև ոսկեգույն շերտաձողիկ` «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությամբ: Կախիչի դարձերեսին ամրացված է մեդալը հագուստին ամրացնելու հարմարանք: Կախիչը մուգ կապույտ է (CMYK 100;100;6;31), 1 ուղղահայաց 10 մմ լայնությամբ մեջտեղով անցնող կարմիր (CMYK 10;100;100;49) զոլակով: Մեդալի դարձերեսին հորիզոնական մեկ տողով գրված են «ՀՀ ԱԻՆ MES RA» բառերը և լազերային եղանակով դաջվում է մեդալի համարը (սկսած 0050-ից): Կատարվող գրառումների անվանանիշը 3.2 մմ ուղղահայաց ուղղությամբ, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | տառատեսակը ` Arial Armenia: - Մեդալների արտաքին տեսքը պետք է համապատասխանի համաձայնեցված նմուշի արտաքին տեսքին` ունենալով նույն համաձուլվածքը, ռելիեֆիային պատկերները, գրվածքները, ժապավենը և գունավորումները: Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ դրոշման եղանակը ապահովում է մեդալների միանմանությունը և չափերի բարձր ճշտությունը: Ցանկացած երկու կրծքանշանի չափսերի շեղումը ոչ ավել քան 0.1 մմ: Մեդալի դարձերեսին դրոշմման եղանակով դաջվում է արտադրողի ապրանքային նշանը: Չի թույլատրվում ` - Պատկերների և գրվածքների աղավաղում: - Մակերեսի վրա խազեր, քերծվածքներ, այլ հետքեր: Մատակարարը մեդալների նմուշների եռաչափ (3D) մոդելավորված նկարները և հետո նմուշները պետք է նախապես համաձայնեցնի պատվիրատուի հետ: Մեդալի հետ տրվում է վկայական (համաձայն հրավերի էսքիզ 5): |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ОАО ЕЮЗ имени ЭМИЛЯ ГРИГОРЯНА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 5 | | | | |